ուր սովորաբար գաւառական ոստիկանն է ապրում, հէնց միայն այն գիւղն էլ օգտւում է. իսկ մի քանի տասնեակ գիւղեր բոլորովին զուրկ են բժշկից օգտուելու հնարաւորութիւնից։ Իսկ Ուտիացոց աշխարհում կրթուած և մասնագէտ մանկաբարձուհիների գոյութեան մասին նոյն իսկ մութ գաղափար անգամ չունին։ Այն ինչ, ի դէպ է ասել, որ բազմամարդ Նիժ գիւղաքաղաքում մի բժիշկ իւր օգնականով և մի հատ էլ մանկաբարձուհի, որ իմանալիս լինէր թէ հայերէն և թէ թուրքերէն լեզուները, ահագին փրկարար գործ կարող էին կատարել։ Ահա երիտասարդ համալսարանաւարտ Հայ բժշկի և մանկաբարձուհիների գործունէութեան համար լայն և ընդարձակ ասպարէզ, ուր կարող են մարդասիրական թէ մեծ գործ կատարել և՛ թէ նիւթապէս ու բարոյապէս լի ու լի շահուել։ Ահա հէնց այս իսկ պատճառներով Ուտիական աշխարհի դրժբախտ Հայ ժողովրդի թիւը չի աճում, իսկ ապրողների արական սեռը թոյլ, անգոյն և տարիքն էլ շատ կարճատև է լինում—45—50 տարեկան։ Ահաւասիկ ձեզ պերճախօս փաստեր։ Ջալալեան Սար. Սրբազանը 1848 թ. երբոր ճանապարհորդում էր Ուտիացոց աշխարհում, Նիժ ուտիախօս գիւղացի բնակիչների թիւն եղել է ընդամենը 500 տուն *)։ Անցել է այն օրից մինչև ցարդ ուղիղ 55 տարի և այսքան երկար ու ձիգ տարի-

*) Տես «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», երես 381։